Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԿՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 7. Կոտայք – ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025-30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.10.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բժշկական խորհրդատվություն,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 45 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 19 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- **Կազմակերպվել է շահառուների ժամանցը՝** մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ «առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա», «զարգացնող խաղեր», «տիկնիկագործություն», «երգ»: Խմբակներին մասնակցել է 43 շահառու:
  Կազմակերպվել է թվով 5 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 43 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ այց Գառնի հեթանոսական տաճար, քարերի սիմֆոնիա, Գեղարդի վանք, այց Հայրիվանք եւ Սեւանա լիճ, Ընտանեկան գրադարանավար ծրագրի շրջանակում «Աստվածաշնչյան պատմություններ» , եռօրյա ճամբար, այց Շառլ Ազնավուրի անվան քաղաքային զբոսայգի:
  **Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** իրականացվել է արվեստի, խաղային, ինտելեկտուալ 34 թերապեվտիկ պարապմունքներ, որոնց մասնակցել է 22 շահառու:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Այլ ծառայություններ**
  **Բուժքույրական ծառայությունների** շրջանակներում 43 շահառուի տրամադրվել է խորհրդատվություն
  **Վարսավիրական ծառայությունից** օգտվել է 10 շահառու:

  **Մատնահարդարման ծառայությունից** օգտվել է 6 շահառու:
  **Դիմահարդարման ծառայությունից** օգտվել է 5 շահառու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

**Միջոցառումներ** (տե՛ս հետևյալ հղմամբ ՝ https://surl.lt/buqeao, https://surl.li/irvcqg, https://surl.li/goypev, https://surl.li/hvujiv, https://surl.lt/daednc, https://surl.li/jspphp:

**Թերապիաներ** (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/dajuyf, https://surl.li/crdccz, https://surl.li/mmqusy, https://surl.li/sryyda, https://surl.li/offzen, https://surl.li/ysliim, https://surl.li/xhegai, https://surl.li/iybxxl

**Հյուրերի ընդունելություն** (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/gpckju

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Կենտրոնի պատասխանատուն մասնակցել է խնամակալության եւ հոգաբարձության 7 նիստի:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 41/43 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 40 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 43 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 22 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 43 |
| 5.1 | Առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա | 34 |
| 5.2 | Զարգացնող խաղեր | 16 |
| 5.3 | Տիկնիկագործություն | 12 |
| 5.4 | Հոգեբանական խմբակ | 15 |
| 5.5 | Երգի խմբակ | 14 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 4վ3 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 13 |
| 7. | Այլ ծառայություն(վարսավիրական,մատնահրադարման,դիմահարդարման)<br>Բուժքուրական խորհրդատվություն | 13<br>43 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 10. 2025թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)